ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ ապրիլի 26-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ «Բ» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ար. Մելիքյանը, տնօրեն Ն. Բաբայանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը, բոլոր դասավանդող ուսուցիչները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Աշակերտների կարգապահության, ուսման առաջադիմության հարցը:
2. Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:

1.Լսեցին. Աշակերտների կարգապահության, ուսման առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար. Մելիքյանը: Նա նշեց, որ առաջին կիսամյակում աշակերտների առաջադիմության արդյունքները ավելի բարձր են եղել, քան 2-րդ կիսամյակում: Խնդիրը ամբողջ դասարանի վարքային դրսևորումներն են, որի պատճառով նույնիսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները վերջին ամիսների ընթացքում թուլացել են: Կան աշակերտներ , որոնք անհիմն են բացակայում են: Արդյունքում իջել է դասարանի առաջադիմության մակարդակը:
Ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանն ու ներկա ուսուցիչները: Բոլորն էլ հաստատեցին, որ նման կարգապահական խնդիրներ ունեցող դասարանում դաս վարելը շատ բարդ է, իրենք չեն կարող աչք փակել նմանատիպ դեպքերում, քանի որ դպրոցի գերխնդիրն է կրթել և դաստիարակել համակողմանի զարգացած սերունդ: Ծնողներին հորդորեցին ամեն օր ստուգել երեխաների դասապատրաստումները, դասագրքերն ու տետրերը, միշտ կապ պահել ուսուցիչների և դասղեկի հետ, անել ամեն ինչ, որ երեխաները չբացակայեն դասերից և ավելի լրջորեն պատրաստվեն, քանի որ առաջիկայում ունեն կիսամյակային ամփոփիչ գրավորներ:

Որոշեցին.
Լինել ավելի հետևողական և ուշադիր, որպեսզի ապահովեն բարձր առաջադիմություն, շտկեն կարգապահական խնդիրները:

2.Լսեցին. -Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արամ Մելիքյանը: Նա նշեց, որ իրենց աշակերտների մի մասը ունեն նոր համազգեստ ձեռք բերելու խնդիր. դրանք փոքրացել են և պետք է փոխարինվեն նորերով: Նա խնդրեց ծնողներին կազմակերպել նոր, անհրաժեշտ նմուշի համազգեստներ ձեռք բերելու գործընթացը:

Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը իր ելույթում նշեց, որ իրեն են դիմել տարբեր դասարանների մի շարք ծնողներ, որոնք խնդրել են կազմակերպել մասնագետների հանդիպումը և համազգեստի չափագրման գործընթացը:

Տնօրեն Նաիրա Բաբայանը նշեց, որ մեր դպրոցի համար ձեռքբերում է համազգեստ կրելը, որը կարգապահության, դպրոցականի վայել տեսքի, կեցվածքի, պահվածքի կարևոր գործոններից է: Շատ կարևոր է նաև ճիշտ, ոչ բարձրակրունկ, հարմարավետ կոշիկների ընտրությունը հատկապես աղջիկների համար: Տղաները պետք է ձեռք բերեն սպիտակ, առանց ավելորդ աքսեսուարների վերնաշապիկներ:

Ելույթ ունեցավ 8-րդ դասարանի ծնող Ամալյա Մկրտչյանը: Նա շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենին այդ կարևոր աշխատանքի կազմակերպման համար՝ նշելով ,որ ծնողները համազգեստի շնորհիվ ազատվել են անընդհատ նոր հագուստներ ձեռք բերելու ավելորդ հոգսից, ինչպես նաև աշակերտների միջև ավելորդ մրցակցությունից, որը խանգարում է սովորելուն: Դպրոցում հաստատված կարգ ու կանոնի, աշակերտների՝ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունների, ուսման մնջ ձեռք բերած հաջողությունների մեջ համազգեստը շատ կարևոր դեր ունի:

Որոշեցին.- Մինչև ուստարվա ավարտը կազմակերպել համազգեստի չափագրման, ձեռքբերման աշխատանքները՝ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի հսկողությամբ և մասնակցությամբ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ա. Մկրտչյան
Քարտուղար՝ Ա. Գեղամյան